

Ձև

Հանրապետություն կուսակցություն

ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անվանումը՝ հայերենով

Republic Party

ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անվանումը՝ անգլերենով

ՀԿ

ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անվանման հապավումը

## Հանրապետություն կուսակցության Նախընտրական Ծրագիր

### ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ

«Հանրապետություն» կուսակցությունը ազգային, պահպանողական կուսակցություն է, որի գործունեությունը և ծրագրերը բխում են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և պետական շահի պաշտպանությունից: Մենք նախագահական համակարգի կողմնակից ենք և կենտրոնացված, ուժեղ կառավարման մոդելը արդյունավետ ենք համարում տարածաշրջանային իրողությունների պայմաններում:

Կուսակցության ծրագրի հիմնական ուղեցույցը ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի գերակայության ապահովումն ու ժողովրդավարության հաստատումն է, քաղաքացիական հասարակության ստեղծումը:

Մեր նպատակն է կառուցել անվտանգ, ամուր տնտեսությամբ իրավական երկիր:

Մեր գերակայություններն են՝

- ❖ Ինքնիշխանության ամրապնդում
- ❖ Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովում
- ❖ Տնտեսության զարգացում՝ աշխատատեղերի ստեղծումով
- ❖ ՀՀ արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացում
- ❖ Ժողովրդագրական պատկերի փոփոխություն՝ արտագաղթի կասեցումով
- ❖ Պետական կառավարման մոդելի փոփոխություն՝ հոգուտ արդյունավետության
- ❖ Միասնության ու համերաշխության մթնոլորտի հաստատում՝ կառուցելու ու պաշտպանելու համար Հայաստանի Հանրապետությունը 21-րդ դարում:

### ՄԵՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԸ

- ❖ Հայաստանի Հանրապետության պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման խնդիրների լուծումը «Հանրապետություն» կուսակցությունը տեսնում է բարեփոխումների համալիր ծրագրի և պրոֆեսիոնալ բանակի աստիճանական անցման միջոցով:
- ❖ Արտաքին քաղաքական հարաբերությունները կառուցելիս կուսակցությունը ուղղորդվելու է ՀՀ ինքնիշխանությունը գերակա արժեք համարելու անբեկանելի սկզբունքով: Արցախի կարգավիճակի վերջնական լուծումը մենք տեսնում ենք, ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում՝ ինքնորոշման իրավունքի գերակայությամբ:

- ❖ «Հանրապետություն» կուսակցությունը գիտելիքահեն տնտեսության կողմնակից է և համարում է, որ 21-րդ դարում ամենաթանկ ապրանքը գիտելիքն է: Նման տնտեսությունն ձևավորելու առաջնային քայլերը կուսակցությունը տեսնում է բուհական կրթության ամբողջական վերափոխմամբ՝ պրակտիկ լաբորատորիաների և փորձարարական ենթակառուցվածքների ներգրավմամբ:
- ❖ «Հանրապետություն» կուսակցությունը կողմ է ազատ շուկայական պայմանների զարգացմանը, օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման մեխանիզմների բարելավմանը, արժեթղթերի շուկայի զարգացմանը և ընդերքի արդյունավետ օգտագործմանը: Մեր բնական ռեսուրսները ճշգրիտ և ռացիոնալ օգտագործելով, հանքարդյունաբերությունը լեռնամետալուրգիայի վերածելով՝ Հայաստանի Հանրապետությունը կարող է զարկ տալ տնտեսական բարեփոխումների շարունակական շղթային: Մենք գտնում ենք, որ լեռնամետալուրգիան ոչ միայն կարող է դառնալ այն լուծմտիվը, որը տեղից կպոկի ՀՀ տնտեսությունը, այլև կլուծի զբաղվածության խնդիրը՝ ապահովելով մեծ թվով աշխատատեղեր:
- ❖ «Հանրապետություն» կուսակցությունը կողմ է դիֆերսիֆիկացված արտաքին քաղաքականությանը, որ կենսական է Արցախյան երկրորդ պատերազմից հետո ստեղծված իրավիճակը կարգավորելու և գերեվարված մեր հայրենակիցների վերադարձը ապահովելու գործում: Հայաստանի Հանրապետության անվտանգային խնդիրների այլընտրանքային ուղիների ձևավորումը «Հանրապետություն» կուսակցությունը գերակա է համարում առաջիկա տարիների համար:
- ❖ «Հանրապետություն» կուսակցությունը կարևորում է քրիստոնեության և Հայ առաքելական եկեղեցու դերակատարումը հասարակության բարոյական նորմերի և արժեհամակարգի ամրապնդման գործում:

## ԱՆՎՏԱՆԳ ԵՐԿԻՐ և ՊՐՈՑԵՍԻՈՆԱԿ ԲԱՆԱԿ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման ոլորտի հիմնական խնդիրների լուծումը «Հանրապետություն» կուսակցությունը տեսնում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի մարտունակության բարձրացման, հզորացման և արդիականացման միջոցով: Կուսակցությունը կարևորում է բանակում հայեցակարգային հենքի վրա իրականացվելիք բարեփոխումների և Հայաստանի Հանրապետության շահերից բխող միջազգային ռազմական ինտեգրացիաների նշանակությունը:

Պաշտպանության ոլորտում ՀՀ ազգային անվտանգության ապահովման լուծումներից մեկը «Հայաստանի Հանրապետության ռազմական բարեփոխումների ռազմավարության» մշակումն է: Ժամանակակից բանակի ստեղծումը պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման պետական քաղաքականության կարևորագույն ուղղություններից է, որ ընդգծում է պրոֆեսիոնալ բանակ ստեղծելու անհրաժեշտությունը: «Հայաստանի Հանրապետության ռազմական բարեփոխումների ռազմավարությունը» պետք է ժամկետներով ներկայացնի ապագայում դեպի պրոֆեսիոնալ բանակ անցում կատարելու մոտեցումները՝ միաժամանակ նախատեսելով պարտադիր զինվորական ծառայության պայմանների աստիճանական փոփոխությունները ներկայացնող ժամանակացույցը, այդ թվում՝ միայն պայմանագրային զինծառայողների կողմից առաջնագծում մարտական հերթապահության իրականացման ժամանակացույցը:

Բարեփոխումների շրջանակը պետք է ներառի նաև քաղաքացիական-ռեզերվային բանակին վերաբերող հարցերը, պետք է հստակեցվեն ռեզերվային ստորաբաժանումների դիրքային պատասխանատվությունները, հրամանատարական կազմը և այլ մանրամասները: Ռազմավարությունը պետք է ներառի ոչ միայն սպայական կազմի ուսուցման ծրագրերի կատարելագործումը՝ արդի ռազմական արվեստի պահանջներին համապատասխանեցումով, Հայաստանում, այլև՝ այլ երկրերում: Պետք է վերանայվի Հայաստանում զորավարժությունների կազմակերպման և այլ երկրների զորավարժություններին մասնակցության կարգը: Իրականացվելիք բարեփոխումների շրջանակներում պետք է բարձրացնել զինծառայողների վարձատրման մակարդակը, հատուկ ծրագրերի իրականացման միջոցով բարելավել սոցիալական պաշտպանվածության և բնակարանային պայմանները:

Հայրենիքի պաշտպանի կերպարը ձևավորվում է ոչ միայն մարտական պատրաստականության բարձրացմամբ, այլ նաև զինված ուժերում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավմամբ: Պետությունը պետք է մշտապես ուշադրություն ցուցաբերի Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան պատերազմների մասնակիցների նկատմամբ: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ անհրաժեշտ է վերամշակել «Ռազմական գործողությունների մասնակիցների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, որը կկարգավորի ռազմական գործողություններին մասնակցած անձանց, այդ թվում՝ ազատամարտիկների և նրանց ընտանիքների անդամների արտոնությունները, թոշակները և այլ վճարումները, բնակարանային պայմանները և սոցիալական ապահովության մյուս երաշխիքները:

## ԴԻՖԵՐՍԻՖԻԿԱՑՎԱԾ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ձևավորման գերակայություններ են Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը, ազգերի ինքնորոշման իրավունքը և ուժի կիրառման բացառումը:

Արտաքին քաղաքական խնդիրներում ՀՀ առաջնայնությունը համարում ենք Արցախի հարցի լուծումը՝ ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքի հիման վրա ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում՝ ձգտելով Արցախի կարգավիճակի հստակեցմանը, անվտանգության ապահովման, սոցիալ-տնտեսական զարգացման և տարածաշրջանային ինտեգրման մեխանիզմների մշամանը:

Հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերություններում խնդիրները պետք է լուծվեն՝ ելնելով պատմական փաստերից, արդի իրողություններից, միջազգային իրավունքի նորմերից և սկզբունքներից:

«Հանրապետություն» կուսակցությունը կողմ է դիֆերսիֆիկացված արտաքին քաղաքականությանը: Աշխատանքներ պետք է իրականացվեն նաև Արևմուտքի հետ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության ապահովման այլընտրանքային ուղիների ձևավորման համար, մասնավորապես պետք է նպաստել բոլոր բնագավառներում Եվրամիության երկրների հետ փոխշահավետ հարաբերությունների զարգացմանը, առանձնակի ուշադրություն դարձնել ՀՀ և Ֆրանսիա հարաբերություններին, ընդլայնել և խորացնել համագործակցությունը ԱՄՆ-ի և ԵՄ-ի անվտանգությունն ապահովող հիմնական կառույցի՝ ՆԱՏՕ-ի հետ:

«Հանրապետություն» կուսակցությունը առանձնացնում է ՀՀ-ԱՄՆ հարաբերությունների նշանակությունը տարածաշրջանային մարտահրավերների ու տնտեսական զարգացման

համատեքստում: Թե ռազմական ոլորտում, թե ներդրումների ներգրավման, թե նոր տեխնոլոգիաների կիրառման համատեքստում ԱՄՆ-ը կարող է լինել կարևոր գործընկեր: Ելնելով Արցախյան հակամարտությունում ստեղծված իրավիճակից՝ պետք է հստակեցնել ռազմավարական գործընկերային փոխգործակցությունը Ռուսաստանի Դաշնության հետ քաղաքական, ռազմական, տնտեսական, մշակութային, գիտական, մարդասիրական ոլորտներում:

Տրանսպորտի և էներգետիկայի ոլորտներում հաղորդակցության ուղիների, էներգետիկ համակարգերի ստեղծման համատեղ ծրագրերի իրականացման, ռազմական և այլ բնագավառներում խորացնել փոխշահավետ հարաբերությունները Իրանի հետ: Շարունակել «Իրան-Հայաստան» գազատարի և հաղորդակցության այլ ուղիների կառուցումը (մասնավորապես՝ հեռանկարում ձեռնարկել «Իրան-Հայաստան» երկաթուղու կառուցումը): Պետք է սկսվեն բանակցություններ Հայաստանով դեպի Վրաստան իրանական գազի տարանցման շուրջ:

«Հանրապետություն» անհրաժեշտ է համարում գործնական ու բովանդակային դարձնել հարաբերությունները Վրաստանի հետ՝ նպաստելով տարածաշրջանային ու միջազգային համատեղ ծրագրերի իրականացմանը:

Լինելով խաչմերուկ Արևելքի ու Արևմուտքի միջև՝ Հայաստանի Հանրապետությունը մեծ հնարավորություններ ունի զարգացնել քաղաքական, տնտեսական ու պատմամշակութային փոխշահավետ հարաբերություններ Չինաստանի, Հնդկաստանի, Մերձավոր Արևելքի երկրների հետ: Բոլոր նախադրյալները կան բարեկամական հարաբերություններ ունենալ Եգիպտոսի, ԱՄԷ-ի, Սաուդյան Արաբիայի և այլ երկրների հետ, որ կնպաստեն Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը և տարածաշրջանային դերի ամրապնդմանը:

Հայկական սփյուռքը մշտապես եղել է Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը: Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում Սփյուռքի կուտակած քաղաքական, մտավոր, նյութական ներուժը, ներդրումային և մասնագիտական հնարավորություններն առավելագույնս պետք է ի գործ դնել Հայաստանի Հանրապետության և Արցախի զարգացման, Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային տնտեսությանն ինտեգրելուն, կոնկրետ, նպատակային ծրագրերի իրականացմանը: Հայաստանի Հանրապետությունը պետք է գործնական քայլեր ձեռնարկի սփյուռքահայ լոբբիստական կազմակերպությունների հետ կապերը սերտացնելու, Սփյուռքի ազգային կյանքը աշխուժացնելու և միասնական քաղաքականությամբ հանդես գալու նպատակով:

## ԱՄՈՒՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Հանրապետություն» կուսակցությունը տնտեսական ծրագիրը մշակելիս հիմնվում է ազատ շուկայական համակարգի մեխանիզմների վրա, որտեղ պետությունը կատարում է կարգավորիչ դեր: Այս համատեքստում կարևոր է արտաքին շուկաների հետ համագործակցության աճը նոր միջպետական պայմանագրերի միջոցով: Արտահանման խթանումը ինչպես արտարժույթային ռիսկի նվազեցման, այնպես էլ վճարային հաշվեշրի կայունացման արդյունավետ միջոցներից մեկն է: Ռեսուրսների վերամշակմամբ վերջնական սպառման ապրանքների արտադրությունը, արտադրական համալիրներում և ենթակառուցվածքներում ներդրումների խթանող գործիքակազմի ընդունումը Էապես կնպաստի դրամական միջոցների շարժի արագացմանը և արժեթղթերի շուկայի աշխուժացմանը: Պետությունը ինստիտուցիոնալ մակարդակում պետք է նպաստի

ներդրողների և ֆինանսական միջոցների պահանջարկ ունեցող ընկերությունների կապի ձևավորմանը: «Հանրապետություն» կուսակցությունը, որպես արտահանման շուկա առաջնայնությունը տալիս է կես միլիարդ բնակչությամբ, ավելի բարձրորակ, բարձր գնողունակությամբ ԵՄ շուկային: Մենք նաև մեծ հնարավորություններ ենք տեսնում չինական և եվրասիական շուկաներում:

«Հանրապետություն» կուսակցությունը առանձնացնում և կարևորում է նորագույն տեխնոլոգիաների ներգրավմամբ հանքարդյունաբերության նշանակությունը ՀՀ տնտեսական զարգացման գործում: Մենք կողմ ենք ընդերքի արդյունավետ շահագործմանը՝ ռիսկերի նվազեցման միջոցառումների ներդրմամբ: Մենք գտնում ենք, որ լեռնամետալուրգիան ոչ միայն կարող է դառնալ այն լոկոմոտիվը, որը տեղից կպոկի ՀՀ տնտեսությունը, այլև կլուծի զբաղվածության խնդիրը, ապահովելով մեծ թվով աշխատատեղեր: Աշխատատեղերի ստեղծման և ազգային անվտանգության ապահովման համար առավելագույնս կարևոր է ռազմական արդյունաբերության զարգացումը: Իբրև սկիզբ՝ պետք է կազմակերպել ՀՀ զինված ուժերի զինանոցի զինտեխնիկայի՝ վիճակագրորեն ամենահաճախ խափանվող դետալների տեղական արտադրությունը:

Գազային կախվածությունից ազատվելու և Էժան Էներգետիկ միջոցներ ունենալու հնարավորությունը կուսակցությունը տեսնում է նոր, ավելի հզոր և հուսալի ատոմակայան կառուցելու, ջրային ռեսուրսները ճիշտ կառավարելու և հիդրոէլեկտրակայաններ հիմնելու, վերականգնվող Էներգետիկայի ներգրավման միջոցով:

Մյուս կարևոր քայլը պետական գնումների կազմակերպման գործընթացի բարելավումն է: Անհրաժեշտ է արդիականացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքը և սահմանել որոշակի ապրանքախմբերի համար որակական միևնույն չափանիշներ, ներդնել հաղթողների ընտրության սուբյեկտիվությունը բացառող մեխանիզմներ:

Կուսակցությունը ցանկանում է Հայաստանում հիմք դնել «ներառական» հաստատությունների, որոնք հնարավորություն են տալիս մարդկանց լայն զանգվածներին մասնակցելու տնտեսական գործընթացներին՝ հնարավորություն տալով ընտրել իրենց գործունեության ոլորտը, դրսևորել տաղանդն ու հմտությունները: Առաջարկվող հաստատությունները իրավական կայուն և արդար երաշխիքներով ապահովելու են մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը և ստեղծում են տնտեսական գործունեության հավասար պայմաններ բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար: Հաստատությունների գործունեության արդյունքում խրախուսվելու են նորարարություններն ու առաջատար տեխնոլոգիաների կիրառությունը:

Հողօգտագործումը գյուղական կյանքի բարեկեցությունը բարձրացնող կարևորագույն տարրերից մեկն է: «Հանրապետություն» կուսակցությունը անհրաժեշտ է համարում իրականացնել հողօգտագործման արդյունավետությունը բարձրացնող միջոցառումների ծրագիր, մասնավորաբար, պետք է վերացնել գյուղատնտեսական հողերի մասնատվածության պատճառները և կամավորության սկզբունքով կիրառել հողակտորների խոշորացման մեխանիզմներ և ընթացակարգեր, մշակել և իրականացնել լեռնային և սահմանամերձ տարածքների ծրագիր, որը կսահմանի Արցախից եկած ընտանիքների համար պետական հողերի երկարաժամկետ վարձակալության պայմաններ, պետական գյուղատնտեսական նշանակության հողերի շուկայական գնից ցածր գնով վարձակալության ընթացակարգ, որը կապահովի գյուղական համայնքներում զբաղվածության աճ և աղքատության մակարդակի նվազում: Իբրև իր գործունեության սկզբունք ունենալով երկրի անվտանգությունն ու աշխատատեղերի ստեղծումը,

Ժողովրդագրական խնդիրների լուծումը՝ «Հանրապետություն» կուսակցությունը ծրագրում է մարզերում փոքր արտադրությունների ստեղծում՝ գյուղմթերքների վերամշակման, տեքստիլի, շինարարական ապրանքների և այլն՝ ըստ տեղական հումքի և հնարավորությունների:

Հաշվի առնելով մեր բնական պայմանները՝ մենք կարող ենք արտադրել բարձրորակ ու մրցունակ, էկոլոգիապես մաքուր բիո արտադրանք, օգտագործելով միայն բնական ծագում ունեցող պարարտանյութեր և իրացնել ամենաթանկ շուկաներում: Գյուղատնտեսական արտադրության վերափոխման այսպիսի քայլերը նոր հնավորություններ կստեղծեն գյուղհամայնքների զարգացման և ապրանքների արտահանման համար:

## ԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«Հանրապետություն» կուսակցությունը օրակարգային է համարում երկրում իրավակարգի ամրապնդումը: Կարգուկանոնի հաստատումը զարգացման գլխավոր երաշխիքն է: Իրավունքի գերակայության հաստատումը անբեկանելի է: Մենք նախագահական համակարգի կողմնակից ենք և կենտրոնացված, ուժեղ կառավարման մոդելը արդյունավետ ենք համարում տարածաշրջանային իրողությունների պայմաններում:

Պետական կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով «Հանրապետություն» կուսակցությունը անհրաժեշտ է համարում ՀՀ կառավարության կառուցվածքային փոփոխությունները՝ նոր նախարարությունների ստեղծումով և գործողների իրավասությունների որոշարկմամբ, պետք է իրականացնել բարեփոխումների համալիր ծրագիր, որը կհստակեցնի կառավարման համակարգում լիազորությունների շղթան և ստորաբաժանումների գործառույթները՝ օպտիմալացնելով կառավարման համակարգը և բացառելով միանման գործառույթների իրականացումը: Աշխատանքներ պետք է իրականացվեն Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության մեծացման համար՝ ավելացնելով նրանց լիազորությունները:

Հասարակական կյանքի կարևորագույն տարրերից մեկը հոգևոր և մշակութային արժեքների սերմանումն ու զարգացումն է: «Հանրապետություն» կուսակցությունը կողմ է Հայ առաքելական եկեղեցու որդեգրած արժեքների պահպանմանը և խրախուսմանը: Միևնույն ժամանակ՝ պետք է ապահովել Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների ազգային, մշակութային և մյուս իրավունքների պաշտպանությունը, նրանց մայրենի լեզվի, կրոնի և մշակույթի պահպանման ու զարգացման հնարավորությունը:

Ժողովրդագրական ստեղծված պայմաններում «Հանրապետություն» կուսակցությունը տեսնում է ծնելիության մակարդակի բարձրացման քայլերի անհրաժեշտություն: Կուսակցությունը ծրագրում է շարունակաբար մեծացնել բազմազավակ ընտանիքների ֆինանսական օժանդակությունը, մշակել ընթացակարգ, որի կիրառմամբ կփոխհատուցվեն բազմազավակ ընտանիքների երեխաների ուսումնական ծախսերի որոշակի մասը:

## ԱՌՈՂՋ ՔԱՂԱՔԱՑԻ

«Հանրապետություն» կուսակցությունը կարևորում է առողջապահական համակարգի նշանակությունը բարեկեցիկ ապագա կառուցելիս: Առողջապահական համակարգի զարգացումը ոչ միայն բարելավում է բնակչության կյանքի որակը, այլև՝ ազգային

անվտանգության խնդիր է՝ դատելով ամբողջ աշխարհը պատուհասած համավարակի դեմ պայքարի ընթացքից:

Կուսակցությունը կողմ է բժշկական պարտադիր ապահովագրության համակարգի ներդրմանը՝ փուլային մոտեցմամբ: Կուսակցությունը կարևորում է նաև դեղագործական ոլորտը, որը ունի հստակ նախադրյալներ առաջանցիկ աճ գրանցելու համար: «Հանրապետություն» կուսակցությունը առաջարկում է բարելավել օրենսդրական կարգավորումները՝ ուշադրություն դարձնելով դեղերի բացասական ազդեցությունների համար պատասխանատվության մեխանիզմներին: Կարևոր է բժշկական պարագաների և սարքավորումների հայրենական արտադրությունը՝ պետական աջակցությամբ, որը ևս կնպաստի գիտության և արտադրության կապի մեծացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը: Կուսակցությունը առաջնային է համարում հաշմանդամություն ունեցող անձանց բնականոն կենսագործության ապահովումը: Այդ իսկ պատճառով, մենք աշխատանքներ պետք է իրականացնենք ոչ միայն նրանց հասարակական ներգրավվածության և զբաղվածության մեծացման համար, այլև ապահովենք անընդհատ իրականացվող բժշկական վերականգնողական ծառայությունների մատուցումը:

## ԳԻՏԵԼԻՔԻ ԵՐԿԻՐ

«Հանրապետություն» կուսակցությունը գիտելիքահեն տնտեսության կողմնակիցն է և համարում է, որ 21-րդ դարում ամենաթանկ ապրանքը գիտելիքն է: «Հանրապետություն» կուսակցությունը վստահ է, որ պետությունը պետք է ապահովի կրթության բնագավառում բյուջետային միջոցների հատկացման շարունակական աճ, որ մուլտիպլիկատիվ էֆեկտով կազդի տնտեսության և հասարակական կյանքի վրա:

Նման տնտեսություն ձևավորելու առաջնային խնդիրը կուսակցությունը տեսնում է բուհական կրթության ամբողջական վերափոխման միջոցով, պրակտիկ լաբորատորիաների և փորձարարական ենթակառուցվածքների ներգրավմամբ, գիտության և արտադրության կապի ստեղծումով: Ուսանողը, կրթություն ստանալուց բացի, պետք է հնարավորություն ունենա իր նոր գաղափարները փորձարկել և իրացնել: Կուսակցությունը հարկ է համարում ապահովել լրացուցիչ մեխանիզմներ բուհերի անկախությունը ապահովելու համար:

Բացի այդ, կուսակցությունը պլանավորում է հանրակրթական ուսուցողական ծրագրերը մշակել ազգային գիտակցության, անալիտիկ մտածողության, ռազմական նախնական պատրաստվածության հենասյուններով: Հանրակրթական ծրագրերը կվերանայվեն և հատուկ ուշադրություն կդարձվեն բնական գիտություններին և նման ուղղվածության կրթօջախների ստեղծմանը: Մենք համարում ենք, որ ավագ դպրոցը ոչ միայն չլուծեց կրկնուսույցների խնդիրը, այլև ժամանակի վատնման և զորակոչի հետ կապված խնդիրներ առաջացրեց: Հանրակրթական հաստատություններում կրթության որակի բարելավում մենք տեսնում ենք դասագրքերի որակի բարձրացման, կրթության ազգային չափորոշիչներին համապատասխանեցման, դասարաններում աշակերտների թվի կրճատման և ուսուցիչների թվի ավելացման միջոցով: Դասավանդման մեթոդիկայում ուսուցիչը պետք է ազատություն ունենա: Դպրոցներում պետք է գործեն կառավարման խորհուրդներ, որոնք կմեծացնեն դպրոց-ծնող կապը:

Համալսարանական ծրագրերը պետք է համապատասխանեն աշխատաշուկայի պահանջներին՝ փոփոխելով իրենց ուղենիշը տեսությունից դեպի հմտություններ: Պետք է ներդնել վարձատրվող աշխատանքային պրակտիկայի ինստիտուտը, որը կապահովի ոչ

միայն ուսանողների մասնագիտական պատրաստվածության աճ, այլև կոգնի մշտապես պահել նորարարական մթնոլորտ ընկերություններում՝ ապահովելով նաև ուսանողների ճկուն գրաֆիկ դասընթացներին հաճախելու համար:

«Հանրապետություն» կուսակցությունը մշակութային զարգացման ծրագիրը խարսխում է ազգային մշակույթի պահպանման և զարգացման վրա: Մասնավորապես, պետք է քայլեր ձեռնարկել ոչ միայն Հայաստանում ազգային մշակույթի պահպանման և զարգացման, այլ նաև երկրի սահմաններից դուրս հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը: Պետք է մեծացնել ոչ միայն ՀՀ-ում գործող գրադարանները, թվայնացնել և զարգացնել վիրտուալ գրադարանները: Մշակութային կենտրոնների գործունեության արդյունավետության բարձրացման համար մշակել մարզային մշակութային կենտրոնների բարելավման ծրագիր:

«Հանրապետություն» կուսակցությունը կարևորում է սպորտի դերը ոչ միայն որպես մեր երկիրը այլ երկներին ներկայացնելու ձև, այլև առողջ և ամուր հասարակության հիմք: Սպորտի բնագավառում մեր քաղաքականության հիմնական ուղղվածությունը սպորտային խմբակներում և մարզադպրոցներում ընդգրկվածության հասանելիությունն է և զարգացման ծրագրերին համայնքային մարզադպրոցների ներգրավվածությունը:

## ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԲՆՈՒԹՅՈՒՆ

«Հանրապետություն» կուսակցությունը շրջակա միջավայրի պահպանության և բնական պաշարների ողջամիտ օգտագործման հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ է համարում բնապահպանական անվտանգ կենսապայմանների ստեղծումը, բնապահպանական երկարաժամկետ, համալիր պետական ծրագրերի մշակումը՝ ներառյալ ջրօգտագործման ծրագիրը: Կուսակցությունը վստահ է, որ պետք է մշտապես վերահսկել բնական պաշարների օգտագործման ոլորտի, այդ թվում՝ հողային, ջրային անտառային ու բնական այլ ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և պահպանության խնդիրները, իրականացնել իրավիճակային ստուգումներ և թափոնների ուսումնասիրման աշխատանքներ, կարևոր է խթանել թափոնների վերամշակմամբ արտադրության կազմակերպումը՝ ներառյալ պլաստիկ թափոնների վերամշակումը:

Կուսակցության ղեկավար կամ լիազոր ներկայացուցիչ

(ստորագրությունը)

Սարգսյան Արամ

(ազգանունը, անունը)